

Դաղղիա դառնալու : Պոսքէ անկողնոյն  
մէջ Ալաքոֆի առման աւետիսը լսեց :

Այդ ահաւոր բերդին առումը վախ-  
ճան տուաւ պատերազմին որ գրեթէ  
տարի մը անընդհատ երկու կողմանէ  
անբաւ արիւնչեղութիւն կ'ըլլար : Ի՞շն  
օրը յայտնի եղաւ թէ Դաղղիական  
բանակը կարսղ էր որ և իցէ ընդդիմակա-  
լութեց յաղթելու, և թէ Պոսքէի պէս  
զօրավար մը գանձ կ'աժէր բանակին .  
բայց գժբաղդաբար նոյն յարձակումը  
եղաւ որ իր կեանքն ալ կ'արձեցուց յետ  
հնդամեայ հիւանդութեան առած վէր-  
քին դժնդակութենէն : Քաջորդ տա-  
րին Արտի 18, կայսրը զինքը Արա-  
ջախտ Դաղղիոյ անուանեց ՚ի փոխարէն  
մեծամեծ վաստակոց՝ որովք հայրենեա-  
ցը փառքն աւելցուց :

Վիշ վայելեց Պոսքէ այս փառաւոր  
մրցանակը զոր իր կեանքը նու իրելով գը-  
նեց : Աւ այս տարի Փետրուարի 5-ն իր  
յետին շունչն աւանդեց, ՚ի մեծ տըրտ-  
մութիւն Դաղղիոյ և ամբողջ բանակին :

### Գանգրահեր շուն:

Ամէն տեսակ շուն՝ բնութեան դրած  
բնական ազդեցութեամբը կարծես թէ  
մարդուս հետ կենակից ըլլալու և ըն-  
կերական վիճակի մը համար ստեղ-  
ծուած է, բայց ամենէն աւելի աս  
յատկութիւնս ունի գանգրահեր շու-  
նը, որ ամենայն կերպով շմարիտ բա-  
րեկամ ու ընկեր մը կրնայ ըսուիլ մար-  
դուս : Ուրիշ ամէն տեսակ շուները մե-  
զի կը ծառայեցընենք կամ մեր օգտին  
և կամ մեր զուարձութեանը համար :  
Դամփոր՝ տուն պահպանելու, հովուի  
շունը՝ հօտին առաջնորդելու, որաի շու-  
նը՝ երես ետեէն վազելու ու բռնելու  
համար կը գործածուի : Իսկ դանեացի  
շունը անօգուտ բեռ մըն է և անձնա-  
սէր ծառայի մը կը նմանի . պղտի տե-  
սակ շանց մէջ կան ոմանք, ինչպէս Աի-  
նու շունը որ իրեն տգեղութենէն ու  
աղտեղութենէն զատ ուրիշ բան մը շու-  
նի . իսկ մէկալ տեսակները կարծես թէ

պարզ հաճոյից ու կանանց զուարձու-  
թեանը համար եղած են ու կամակոր և  
երես առած տղու մը կը նմանին : Իսկ  
գանգրահերը ոչ գերիի մը պէս է և ոչ ալ  
անօգուտ ուրիշ քանի մը տեսակ շունե-  
րու պէս, թէպէտ և մասնաւոր պաշտօն  
մ'ալ չունի ընելու . մարդս միշտ զինքը  
կը սիրէ՝ փոխարէն իրմէ կը սիրուի .  
այս պատճառաւ շատ տեսակ բաներ կը  
պատմուին գանգրահեր շուներուն վրայ  
և պատկերահաններուն սիրելի եղած  
կենդանիներէն մէկն է : Այս կողմանէ  
նշանաւոր է ( )րաս Ա երնէի գեղեցիկ  
նկարը որ երկու երիտասարդ զինուոր-  
ներ խնամ կը տանին գանգրահեր շան  
մը վրայ, որ իրեն երախտագիտութիւնը  
իր արտաքին կերպովը կը յայտնէ . նոյն  
պէս շատ սիրուն է նոյն հեղինակին միւս  
նկարը՝ որուն մէջ ուրիշ գանգրահեր  
շուն մը իր թմբկահար տիրոջ վերքէն  
վաղած արիւնը կը լզէ : | ուվրի շունը,  
որուն սրտաշարժ պատմութիւնը Վա-  
զիմիր Ծըլավիներ կը պատմէ, նոյնպէս  
գանգրահեր շուն մըն է . Հոն աղքատին  
թաղմանը ուրիշ յուղարկաւոր գացող  
չկայ եթէ ոչ միակ հաւատարիմ բարե-  
կամ մը, որ է գանգրահեր շուն մը :  
Ա երջապէս գանգրահերը չէ որ իր գըժ-  
բաղդ տիրոջը հրացանով սպաննուելու  
ատենը իր ետեի թաթերուն վրայ կե-  
ցած քովէն բաժնուիր, որպէս զի այն  
մահառիթ գնտակը իրեն կեանքն ալ  
վերցընէ :

Ինչուան հիմա ըսածներնէս յայտնի  
կ'ըլլայ որ գանգրահերը՝ շան այլ և այլ  
տեսակներուն մէջ ամենէն աւելի բա-  
րեկամու հաւատարիմ կրնայ ըսուիլ իր  
տիրոջը, և միանգամայն արթուն է մը-  
տօք իր տիրոջը որ և իցէ ակնար-  
կութեանցը : Դայց գժբաղդաբար բը-  
նութեամնը համեմատ չէ իր արտաքին  
տեպը, վասն զի սիրուն ու վայելուչ չէ :  
Ա րան սաստիկ թաւ է և տգեղ, արջի  
մը կը նմանի . իր կարծ ու հաստ ան-  
գամները թաւ մազով մը ծածկուած  
են, և պոչն ալ շատ չկրնար բար-  
ձրացնել ուրիշ շուներուն պէս . գլուխը  
շատ տգեղ է, վասն զի երկու կող-



### Գանգրահեր շունք :

մէն իր մեծ ականջները կախուած են, և ինչուան քթին ծայրը թաւ մազ է, ու աշուշներն ալ լայն յօնքերուն տակ ծածկած ըլլալուն պատճառաւ պէտք է ուշադրութեամբ փնտուել որ կարենան տեսնուիլ:

Դանգրահերը ըստ բնութեան թողլով այս տգեղ պայմանին մէջն է. բայց արուեստով ու ճարտարութեան իր տը գեղութիւնները կ'ուղղուին, և չկայ ուրիշ կենդանի մը որ ասոր չափ փոփոխութիւն կրէ: Ո ասն զի այս տգեղութիւններս վերցընելու համար պէտք է իր գաւակին մազերը բոլորովին կտրել և առջեխ կողմը ընդ հակառակն թոլորովին թողուշ՝ որ բաշի պէս ձւանալով կարծես թէ առիւծ մը կը դառնայ, նոյն պէս պէտք է իր ճակտին մազերը կտրել, վասն զի անով դէմքը և իր վառվուուն ու զուարթ աշուշները յայտնի կը տեսնուին:

Դանգրահեր շունք ընդհանրապէս զինուորաց շատ սիրելի է ու քովերնեն

չքամնուիր, և ճարտարամիտ է տեսակ տեսակ խաղեր սորվելու. ինչպէս ձեռք տալ երբոր ուզեն, ետևի երկու ոտիցը վրայ ելլել, ըստ հրամանին զլուխը դեպ 'ի ձախ կամ աջ դարձնել, գաւազան մը բերանը բռնած տանիլ, զինուորի պէս շիտակ ու անշարժ կենալ, ծածկած բան մը գանել, բան մընետուելուն պէս երթալ բերել, գետի մէջ նետուիլ գաւազան կամ ուրիշ բան մը բերելու համար. ահա իր ճարտարութիւններէն մէկ քանին, որոնց պէս ուրիշ շատ տեսակ բաններ կրնայ սորվիլ որոնք մէկիկ մէկիկ համրելը աւելորդ է: Բայց ասոնցմով միայն սիրելի չէր ըլլար, եթէ չունենար բարուց գեղեցիկ ձիլքեր ալ, ինչպէս զինուորական արիութիւն մը ու օգտակար ըլլալու ջանք, անկեղծ հպատակութեան փոյթ, անշահասէր տիրասիրութիւն, որով որ պէտք եղած տեղը կրնայ երկար ատեն անօթի կենալ ու գետնի վրայ պառկիլ. վերջապէս մէկ խօսքով, աղէկ ընկեր մըն է:

որուն վրայ մարդս կրնայ վստահ ըլլալ  
ծանր և տրտմալի հանգամանաց մէջ, և  
զուարթարար մնջկատակ մը, պարապոյ  
ու հանգստեան ժամերուն ձանձրութիւն  
փարատելու համար :

Յիաւամազ ըլլալով, ինչպէս վերն  
ըսինք, ցրտի աղեկ դիմանալովն և ջու-  
րի մէջ նետուած բանը բերելու յաջո-

ղակութեանն համար, քանի մը որսորդ-  
ներ ձահիճներու մէջ որսորդութեան  
գործածեցին զինքը : Յաւապէտ փորձեր-  
նին բոլորովին անյաջող չելաւ, բայց ին-  
չուան հիմա գանգրահերը բարակին  
պէս որսի յարմար ըլլալուն անուն մը  
չունի :

## ՃՊՈՒՌՆ ԵՒ ՄՐՁԻՒՆ

Ամառն ՚ի բուն  
Երգելու հետ էր շըպուռն,  
Զըմեռն հասաւ  
Ուտելու բան ըսգըտաւ .  
Ոչ ձանձի կըտոր,  
Ոչ մանր որդերու  
Ո՞ընացորդ բըսոր:  
Ելաւ գընաց  
Դըրացի մըրթիւնին քով.  
Կու լար սոված,  
Փոխ կ'ուզէր աղաչելով  
Ո՞էկ քանի հատիկ,  
Որոնցմով ապրի  
Ո՞ինչև ցը՞ ատիկ .  
Վ'երդնում կ'ըսէր  
Խօսք կու տար, խօսք անբանի,  
Վ'եզ գարձընել  
Ո՞ինչև նոր հունձքերն հասնի,  
Դըրուխը շահով  
Հարիւրին տասնով:  
Ո՞ըրթիւնն ալ փոխ տալ չիտե ,  
Վ' իրեն ցեղին  
Ո՞էկ պըզտի պակսութիւնն է :  
Ամառուան տաքին  
Բանդ ու գործդ ինչ էր,  
Հարցուց փոխառուին : —  
— Հօրեկն ու գիշեր,  
Ինձ մի սըրդողիր,  
Եկող գացողին  
Վ'երգէի իժիր : —  
Վ'երգէիր,  
Վ'ցէկ ա .  
Հապա ել գընա  
Պար բըռնէ հիմա :